

տատուեցաւ՝ իր աշակերտը Սարգիսն հոն կանչեց եւ զինք վարդապետ ձեռնագրեց: Սարգիս վ. անկէ Բատուա անցնելով՝ երկու տարիէն՝ Աստուածաբանութեան ուսումն աւարտեց, եւ միտքը դրաւ Հայաստան երթալ ուղղափառ հաւատքը քարոզելու, մանաւանդ որ գիտէր թէ Էջմիածնի Ղուկաս կաթողիկոս աշակերտն է Յարութիւն Բասենցի Արքեպ.ին, եւ վերջինս զինք կը գովէր միշտ՝ իբրեւ բարեբարոյ եւ ուղղափառութեան մէտ: Միւս կողմանէ լսած էր, թէ Ղուկաս Էջմիածին ժողովք գումարած է Արաց հետ ի հաւատս միանալու դիտաւորութեամբ: Սարգիս ծածուկ պահելով այս խորհուրդը՝ եւ Յարութիւն Բասենցիէն Ղուկաս կաթողիկոսին ուղղուած յանձնարարական մ'առած՝ Պոլիս գնաց եւ Մոնս. Ֆրաքիա Նուիրակին յայտնեց: Ասկէ հրահանգներ եւ յանձնարարականներ առաւ, Էւդոկիա-կարին մեկնեցաւ աշխարհական տարագով: Կարին կաթողիկեայ Հայոց առաջնորդը՝ Ուռուպձեանց Յովհ. վ. եւ մեծամեծներ զինքն զգուշացուցին, սակայն անիկայ Բասեն անցաւ, այնտեղ քիչ մ'ատեն մնաց Յարութիւն Բասենցւոյ ազգականներու քով, եւ վերջապէս հայհոռոմի սրբմով մտաւ Էջմիածին, իբրեւ հնասէր ուղեւոր մը: Լաւ յանձնարարականներ ունենալուն, մանաւանդ Բասենցւոյնը, կաթողիկոսը զինք սիրով ընդունեցաւ: Սարգիս յաջորդ օրն առանձին գաղտնի ունկնդրութիւն ուղեց կաթողիկոսէն եւ փակուեցաւ կաթողիկոսին հետ, դուռը կղպած: Նպատակը պարզեց, եւ յորդորեց որ